

ՌՈՒՋԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

ՄԱՏԵՆԱԳԱՐԱՆԻ ԵՔՐԱՅԵՐԵՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ՀԻՆ ՀԱՎԱՔԱԾՈՒԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐ

Մաշտոցի անվան Մատենադարանում, ի թիվս օտարալեզու այլ ձեռագրերի, պահվում են նաև երբայերեն ձեռագրեր՝ հին և նոր հավաքածուներով, որոնցից առաջինի մեջ մտնում են էջմիածնից 1939-ին տեղափոխված ձեռագրերը, իսկ երկրորդում՝ 1980-ականներին Ուկրաինայից բերված ԺԹ դարի փաթեթավոր մագաղաթյա ավելի քան 100 ձեռագրերը:

Հին հավաքածուն համալրվել ու հարստացել է 1920-50-ականներին՝ հիմնականում անհատների և մի քանի հաստատությունների նվիրատվությունների շնորհիվ: Դրա մեջ ընդգրկված 21 ձեռագրերի համառոտ նկարագրությունն առանց բովանդակային նշումների գրանցվել է ձեռագրատան գույքամատյանում:

Խորհրդային տարիներին երբայերեն ձեռագրերով հետաքրքրվել են Մոսկվայի և Պետերբուրգի երբայագետները, որոնցից մեկը՝ Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի արեւելագիտության ինստիտուտի դոկտոր Իոսիֆ Ամուսինը, 1969-ին ուսումնասիրելով 13 ձեռագիր № № 2, 3, 4, 5, 6, 7, 24, 37, 58, 62, 70, 71, 118), կազմել է դրանց համառոտ ցուցակը, նշելով, թե տվյալ ձեռագիրը Հին կտակարանի որ գրքից է ընդօրինակված:

Գույքամատյանում ավելի ուշ՝ 1970-ականներից ընդգրկված № № 132, 136, 138, 139, 141, 148, 195 ձեռագրերի բովանդակության մասին մեր հետազոտությունից առաջ որեւէ նշում չի եղել, ինչը թույլ է տալիս ասելու, որ այդ ձեռագրերը երբեւէ չեն ուսումնասիրվել:

Մանրամասն ուսումնասիրելով հին հավաքածուի մեջ մտնող բոլոր 21 ձեռագրերը, նկատեցինք, որ դրանցից № 137-ը՝ ստացված 1967 թ. Վարուժան Մալաթյանից, երբայերեն չէր, այլ՝ սանսկրիտ: Անընթեռնելի էին № 139 և № 132 (երբայերեն գրությամբ կավե թաս) ձեռագրերը: Բոլորովին անսպասելի էր № 148 ձեռագրի բովանդակությունը, որը ի տարբերություն մյուս ձեռագրերի, ոչ թե ընդօրինակություն էր Ծննդոց, Թվոց, Ելից, Երկրորդ օրինաց, Եսթեր գրքերից, այլ Սուրբ գրոց մեկնություն էր՝ բաղկացած է 25 մասից, գրված մանրատառ և յուրատիպ ձեռագրով:

Հին կտակարանի տեքստեր պարունակող ձեռագրերը երբայերեն բնա-

գրի հետ մեկ առ մեկ համեմատելով նկատեցինք, որ Ի. Ամուսինի եւ մեր նշումներում կան որոշակի տարբերություններ: Օրինակ՝ ՆՁ 24 ձեռագրի երկրորդ մասը ոչ թե երկրորդ օրինացի գլուխ Ժ-ից է, այլ ԺԱ-ից, ՆՁ 6 ձեռագրի վերաբերյալ նշված չէր, թե ելից գրքի Դ գլխի որ ենթագլխով է ավարտվում ձեռագիրը, ՆՁ 70 ձեռագրի բովանդակության մասին նշված էր միայն, որ այն անեծք է:

Այսպիսով, կարող ենք արձանագրել, որ եբրայերեն հին հավաքածուի մեջ ընդգրկված ձեռագրերն ունեն հետեւյալ բովանդակությունը.

Թիվ 2 – Ծնունդք, Ը. 2–ԺԸ. 13՝ Եւ խցան աղբիւրք անդնդոց եւ սահանք երկնից, եւ արգելաւ անձրեւ յերկնից եւ զիջանէր տակաւ, եւ երթայր ջուրն եւ թուլանայր յերկրէ եւ նուզէր ջուրն յետ հարիւր եւ յհիսուն աւուր ...Եւ ասէ Տէր ցԱբրամ. Զի՞ է զի ծիծաղեցաւ Սառա ընդ միտս իւր եւ ասէ, թէ արդարեւ ծնանիցի՞մ, զի ահա ես պառավեալ եմ: Տեղեկություն - նյութը՝ կաշի, թերթ՝ 1, Աշխարհբեկ Քալանթարի ձեռագրերից, ստացված 1937 թ.:

Թիվ 3 – Ծնունդք, Ա. 1–Ժ. 20՝ Ի սկզբանէ արար Աստուած զերկին եւ զերկիր: Եւ երկիր էր անբերելոյթ եւ անպատրաստ... Սոքա են որդիք Քամայ յազգս իւրեանց, ըստ լեզուս իւրեանց յաշխարհս իւրեանց եւ ի տոհմս իւրեանց: Տեղեկություն - նյութը՝ կաշի, թերթ՝ 1, Աշխարհբեկ Քալանթարի ձեռագրերից, ստացված 1937 թ.:

Թիվ 4 – Ծնունդք, ԺԲ. 14–ԻԴ. 35՝ Եւ եղև իբրև եմուտ Աբրամ յճփպտոս, եւ տեսեալ եփպտացուցն զկինն զի գեղեցիկ էր յոյժ...Տէր օրհնեաց զտէր իմ յոյժ, եւ բարձրացաւ. եւ ետ նմա արջառ եւ ոչխար եւ արծաթ եւ ոսկի, ծառայս եւ աղախնայս: Տեղեկություն - նյութը՝ կաշի, թերթ՝ 1 Աշխարհբեկ Քալանթարի ձեռագրերից, ստացված 1937 թ.:

Թիվ 5 – Ելք, ԼԲ. 25–ԼԵ. 15՝ Եւ ետես Մովսէս եթէ յանցեաւ ժողովուրդն, քանզի յանցոյց զնոսա Ահարոն յոտնհարութիւն թշնամեաց իւրեանց... Եւ զսեղանն խնկոց, եւ զլծակս նորա, եւ զիւզն օծութեան, եւ զխունկան հանդերձանաց, եւ զվարագոյր դրան խորանին: Տեղեկություն - նյութը՝ կաշի, թերթ՝ 1:

Թիվ 6 - ա) Ծնունդք, Ծ. 13–25՝ Բարձին զնա եւ թաղեցին զնա անդ՝ եւ տարան զնա որդիքն իւր յերկիրն Քանանացուց, եւ թաղեցին յայրին կրկնում, զոր ստացաւ Աբրահամ ի ստացուածս շիրմի յեփրոնէ Քետացույ յանդիման Մամբրէի... Եւ վախճանեցաւ Յովսէփ ամաց հարելու եւ տասանց , եւ թաղեցին զնա, եւ եդին զնա ի տապանի յճփպտոս:

բ) **Ելք, Ա. 1–Դ. 8՝** Այս են անուանք որդւոցն Իսրայելի մտելոցն յճփպտոս հանդերձ Յակոբաւ հարբն իւրեանց. իւրաքանչիւր ըստ համօրէն

տանց իւրեանց մտանէին... եւ ասէ , Արկ զձեռն քո ի ծոց քո; եւ արկ զձեռն իւր ի ծոց իւր, եւ եհան զնա ի ծոցոյ իւրմէ, եւ դարձեալ անդրէն ի նոյն հաստատեցաւ ի գոյն մարմնոյ իւրոյ: Տեղեկություն – նյութը՝ մագաղաթ, թերթ՝ 1, Ստ. Լիսիցյանի արխիվից, ստացված 9 ապրիլի, 1958 թ.:

Թիվ 7 – Թիւք, ԻԶ. 15–ԻԸ. 14՝ եւ որդիք Գազայ՝ ըստ գնդից իւրեանց, Սափոն, եւ գունդ մի Սափոնայ. Անդի, եւ գունդ մի Անգեայ եւ նուէր նոցա կէս դորակին գինւոյ լիցի առ զուարակ մի, եւ երրորդ դորակին լիցի առ խոյ մի, եւ չորրորդ դորակին լիցի առ գառն մի: Տեղեկություն - նյութը՝ մագաղաթ, թերթ՝ 1:

Թիվ 24 – Հմայիլ՝ ա) Ելք, ԺԳ. 1–9՝ Խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի եւ ասէ, Սրբեա դու ինձ զամենայն անդրանիկ նախծին որ բանայ զամենայն արգանդ ի մէջ որդւոցդ Իսրայելի, ի մարդոյ մինչեւ յանասուն, քանզի իմ է եւ եղիցի քեզ նշան ի վերայ ձեռին քոյ, եւ յիշատակ առաջի աշաց քոց, զի լինիցին օրէնք Տեառն ի բերան քում, զի հզոր ձեռամբ եհան զքեզ Տէր յեգիպտոսէ:

բ) Ելից, ԺԳ. 11–16՝ եւ եղիցի յորժամ տանիցի զքեզ Տէր Աստուած քո՝ յերկիրն Քանանացւոց, որպէս երդուաւ քեզ եւ հարցն քոց, եւ տացէ զնա քեզ.... եւ եղիցի նշան ի վերայ ձեռին քոյ, եւ անշարժ առաջի աշաց քոց. քանզի հզոր ձեռամբ եհան զմեզ Տէր յեգիպտոսէ:

գ) Երկրորդ օրէնք, Զ. 4–10՝ Լուր Իսրայէլ, տէր Աստուած մեր՝ Տէր մի է. եւ սիրեսցես զտէր Աստուած քո յամենայն սրտէ քումմէ եւ յամենայն անձնէ քումմէ եւ յամենայն զորութենէ քումմէ... եւ արկցես զսոսա նշան ի ձեռին քում, եւ եղիցի անշարժ առաջի աշաց քոց . եւ գրեսցես զնոսա ի վերայ սեմոց տանց քոց եւ ի դրունս քո:

դ) Երկրորդ օրէնք, ԺԱ. 13–22՝ եւ եթէ լսելով լուիցես ամենայն պատուիրանաց նորա զոր ես պատուիրեմ քեզ այսօր, սիրել զտէր Աստուած քո եւ պաշտել զնա յամենայն սրտէ քումմէ, եւ յամենայն անձնէ քումմէ...եւ աւուրք որդւոց ձերոց ի վերայ երկրին՝ զոր երդուաւ Տէր հարցն քոց տալ քեզ՝ ըստ աւուրց երկնից ի վերայ երկրի: Տեղեկություն - նյութը՝ մագաղաթ, թերթ՝ 4, տեղավորված սովորաբար զիոքր տուփի մեջ, գնված Գարեգին Մկրտչի Հակոբյանից, 26 հուլիսի, 1948 թ.:

Թիվ 37 - ա) Թիւք, ԼԵ. 2–ԼԶ. 10՝ եւ եթէ ելանելով ելանիցէ սպանօղն ըստ սահմանս քաղաքին յոր ապաւինեցան, եւ գտցէ զնա մերձաւոր արեանն արտաքոյ սահմանաց քաղաքին ապաստանի իւրոյ...եւ որպէս հրաման ետ Տէր Մովսիսի, այնպէս արարին դատերքն Սաղպաադու:

բ) Երկրորդ օրէնք, Ա. 1–Բ. 23՝ Այս են պատգամք՝ զոր խօսեցաւ Մովսէս ընդ ամենայն Իսրայելի յայնկոյս Յորդանանու յանապատին յարեւմուտս՝ մերձ

ի ծովն Կարմիր... Եւ խեւացիքն որ բնակեալ էին յԱսիրովթ մինչեւ ցՔազա. եւ Քամիրքն՝ որ ելեալ էին ի Քամրաց՝ սատակեցին զնոսա, եւ բնակեցան փոխանակ նոցա: Տեղեկություն - նյութը՝ մագաղաթ, թերթ՝ 1:

Թիվ 58 - Երկրորդ օրէնք, լԲ. 27-ԼԳ. 12՝ Ասացի՝ բամ ցրեցիր զնոսա, դադարեցուցից ի մարդկանէ զյիշատակս նոցա. թէ ոչ վասն բարկութեան թշնամեաց, զի մի երկայնակեացք լինիցին, եւ զի մի բարձրասցին հակառակորդքն եւ ասիցեն, թէ ձեռն մեր բարձր՝ եւ ոչ Տէր արար զայս ամենայն... Եւ յամենայն երկիր նորա զնշանս մեծամեծս, զձեռն հզօր եւ զբազուկ բարձր՝ զոր արար Մովսէս առաջի որդւոցն Իսրայելի: Տեղեկություն - նյութը՝ կաշի, թերթ՝ 1:

Թիվ 62 - Երկրորդ օրէնք, ԻԷ. 9-ԻԸ. 59՝ Եւ խօսեցաւ Մովսէս եւ քահանայքն եւ ղեւտացիք ընդ ամենայն Իսրայելի եւ ասեն. Լուռ լեր եւ լուր Իսրայել... Եւ եթէ ոչ լուիցէք առնել զամենայն բանս օրինացս այսոցիկ, զգրեալս ի գիրս յայսմիկ, երկնչել ի պատուական եւ սքանչելի անուանէ տեառն Աստուծոյ քոյ, նորանշան արասցէ Տէր զհարուածս քո եւ զհարուածս զավակի քոյ, զհարուածս մեծամեծս եւ զարմանալիս, եւ զցաւս շարաշարս եւ զկարեւորս: Տեղեկություն - նյութը՝ կաշի, թերթ՝ 1, գնված Երեւանաբնակ Փրիզոր Հովսեփի Նազարյանից, 25 օգոստոսի, 1958 թ.:

Թիվ 70 - Հմայիլ՝ Իմացեք երկրի բոլոր ազգեր, որ Եհովայի անունը ձեզ վրա է... Հրեշտակներ պահպանող, փրկող եւ պաշտպանող՝ Պրիզոն, Ամրիզոն, Նատրիզոն, Ազրայել... պահպանեք եւ փրկեք այս Հմայիլը բոլոր շարիքներից, վնասներից, կորուստներից, նիզակներից, զենքերից... (այնուհետեւ նշվում են եբրայերեն այբուբենի 22 տառերի հերթականությամբ անուններ՝ Այա, Բայա, Գայա, Դայա, Հայա, Վայա, Ջայա... Տայա: Հմայիլը ավարտվում է մեզ համար անհասկանալի անունների թվարկումով): Տեղեկություն - նյութը՝ մագաղաթ, թերթ՝ 1, զարգագրություն կարմիր թանաքով, ստացված գրականության թանգարանից, 4 փետրվարի, 1961 թ.:

Թիվ 71 - Հմայիլ՝ ա) Ելից, ԺԳ. 1-16՝ Խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի եւ ասէ. Սրբեա դու ինձ զամենայն անդրանիկ նախժին որ բանայ զամենայն արգանդ ի մէջ որդւոցդ Իսրայելի, ի մարդոյ մինչեւ յանասուն, քանզի իմ է... Եւ եղիցի նշան ի վերայ ձեռին քոյ, եւ անշարժ առաջի աշաց քոց. քանզի հզօր ձեռամբ Եհան զմեզ Տէր յեգիպտոսէ:

բ) Երկրորդ օրէնք, Զ. 4-10՝ Լուր Իսրայել, տէր Աստուած մեր՝ Տէր մի է. եւ սիրեսցես զտէր Աստուած քո յամենայն սրտէ քումմէ եւ յամենայն անձնէ քումմէ եւ յամենայն զորութենէ քումմէ... Եւ արկցես զսոսա նշան ի ձեռին քում,

և եղիցի անշարժ առաջի աչաց քոց. և գրեսցես զնոսա ի վերայ սեմոց տանց քոց և ի դրունս քո:

Կ) Երկրորդ օրէնք, ԺԱ. 13–22` Եւ եթէ լսելով լուիցես ամենայն պատուիրանաց նորա զոր ես պատուիրեմ քեզ այսօր, սիրել զտէր Աստուած քո և պաշտել զնա յամենայն սրտէ քումմէ... Եւ դրեսչիք զսոսա ի վերայ սեմոց տանց ձերոց և ի դրունս ձեր, զի բազմօրեայք լինիցիք, և աւուրք որդւոց ձերոց ի վերայ երկրին` զոր երգուաւ Տէր հարցն քոց տալ քեզ` ըստ աւուրց երկնից ի վերայ երկրի: Տեղեկություն` նյութը` մագաղաթ, թերթ` 1, հանված հմայիլների ֆոնդից:

Թիվ 118 – Ծնունդք, ԻԲ. 4–Իէ. 29` Եւ եկն ի տեղին զոր ասաց նմա Աստուած. և յաւուրն երրորդի համաբարձ Աբրաամ զաշս իւր և ետես զտեղին ի հեռաստանէ... Եւ ծառայեսցեն քեզ ազգք, և երկիր պագցեն քեզ իշխանք. և եղիցես տէր եղբօր քում, և երկիր պագցեն քեզ որդիք հօր քոյ: Տեղեկություն - նյութը` մագաղաթ, թերթ` 2, գնված 14 փետրվարի, 1967թ. Երեւան քաղաքի բնակիչ Հակոբ Երիցյանից:

Թիվ 132 Կավե թաս` ծիսական գրությամբ` անընթեռնելի: Տեղեկություն–նվիրատվություն Ջիբրայել Այվազի հուղավերդյանից, 21 հունիսի, 1971 թ., Աբադան, Իրան:

Թիվ 136 - Գիրք եսթերի, Ա. 1–Բ. 9` Եւ եղեւ յետ բանիցս այսոցիկ յաւուրս Արտաշէսի, որ և այս Արտաշէս կալաւ ի Հնդկաց աշխարհէն մինչև յեթովպիա հարիւր քսան և եօթն գաւառ... Եւ յորժամ լու եղեւ հրաման թագաւորին, ժողովեցան աղջկունք բազումք ի Սիսան քաղաք, որ էր ընդ ձեռամբ Ուլգեայ: Տարան զեսթեր առ Ուլգա, որ էր ներքինի ի վերայ կանանց: Տեղեկություն - նյութը` մագաղաթ, թերթ` 2, նվիրատվություն բեյրութաբնակ կեսարացի Պերճ Մելիքի Կարապետյանից, 22 հունիսի, 1972 թ.:

Թիվ 138 - Երկրորդ օրէնք, Զ. 4–10` Լուր Իսրայէլ, տէր Աստուած մեր` Տէր մի է. և սիրեսցես զտէր Աստուած քո յամենայն սրտէ քումմէ և յամենայն անձնէ քումմէ և յամենայն զորովեսնէ քումմէ... Եւ արկցես զսոսա նշան ի ձեռին քում, և եղիցի անշարժ առաջի աչաց քոց. և գրեսցես զնոսա ի վերայ սեմոց տանց քոց և ի դրունս քո: Տեղեկություն - նյութը` մագաղաթ, թերթ` 1, ստացված իրանահայ ներգաղթողից 4 հոկտեմբերի, 1972 թ.:

Թիվ – 139 – Անընթեռնելի: Տեղեկություն - նյութը` մագաղաթ, թերթ` 1, կոտրված ապակյա գլանի հետ, բերված Լվովից, Վարդան Գրիգորյանի միջոցով, 6 դեկտեմբերի 1962 թ.: Գտնվել է ավերակ շենքի հիմքի միջից:

Թիվ 141 - ա) Երկրորդ օրէնք, Զ. 4–10` Լուր Իսրայէլ, տէր Աստուած

մեր՝ Տէր մի է. եւ սիրեցես զտէր Աստուած քո յամենայն սրտէ քումմէ եւ յամենայն անձնէ քումմէ եւ յամենայն զորութենէ քումմէ... եւ արկցես զսոսա նշան ի ձեռին քում, եւ եղիցի անշարժ առաջի աչաց քոց. եւ գրեցես զնոսա ի վերայ սեմոց տանց քոց եւ ի դրունս քո:

բ) ՃԱ. 13–22` եւ եթէ լսելով լուիցես ամենայն պատուիրանաց նորա զոր ես պատուիրեմ քեզ այսօր, սիրել զտէր Աստուած քո եւ պաշտել զնա յամենայն սրտէ քումմէ... եւ գրեցիք զսոսա ի վերայ սեմոց տանց ձերոց եւ ի դրունս ձեր, զի բազմօրեայք լինիցիք, եւ աւուրք որդւոց ձերոց ի վերայ երկրին՝ զոր երգուաւ Տէր հարցն քոց տալ քեզ՝ ըստ աւուրց երկնից ի վերայ երկրի: Տեղեկություն - նյութը՝ մագաղաթ, թերթ՝ 1, նվիրատվություն թիֆլիսաբնակ Ռաֆայել Մարգարի Միքայելյանից Բ. Չուգասզյանի միջոցով, 9 մարտի, 1978 թ.:

Թիվ 148 - Սուրբ գրոց մեկնություններ՝ բաղկացած 25 մասից՝ Ծնունդք, Ելք, Ղեւտական, Նոյ, Իսահակ, Ընծա (Տերումա), Ութերորդ (Շմինի), Մահվանից հետո (Ախարեյ մավետ), Արբույթյուններ (Կողաշիմ) եւ այլն: Տեղեկություն - նյութը՝ թուղթ, թերթ՝ 185, կազմը՝ դրոշմագարդ կաշի, գնված երեւանաբնակ Ռուբեն Լիպարիտի Շահբազյանից, 19 ապրիլի, 1975 թ.:

Թիվ 195 - Գիրք եսթերի, Ա. 1–Ժ. 3` եւ եղեւ յետ բանիցս այսոցիկ յաւուրս Արտաշէսի, որ եւ այս Արտաշէս կալաւ ի Հնդկաց աշխարհէն մինչեւ յնթովպիա հարիւր քսան եւ եօթն գաւառ...եւ իբրեւ առնոյր Մուրթքէ զթագաւորութիւնն յԱրտաշիսէ, եւ էր մեծ ի թագաւորութեանն իւրում, եւ փառաւորեալ եւ սիրեցեալ էր ի Հրէից անտի, եւ պատմէր զիրսն եղեալսն ամենայն ազգատոհմին իւրում: Տեղեկություն - փաթեթային, նյութը՝ մագաղաթ, թերթ՝ 1, ստացված 18 մարտի, 1987 թ.:

Հավելենք նաեւ, որ այս ձեռագրերը տեսնելու համար 2005-ին Մատենադարան է այցելել Իսրայէլի գլխավոր ռաբբի Յոնա Մեցգերը, Մատենադարանի տնօրեն Սեն Արեւշատյանի ուղեկցությամբ իջել է ձեռագրատուն եւ կարճատեւ հայացք նետելուց հետո ասել, որ դրանք արժեքավոր են գիտական ու հոգեւոր առումներով: